

ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ
ԽՈՍՔԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՀՏԴ 373. 1

DOI: 10.56246/18294480-2023.15-41

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՆԵԼԼԻ

Շիրակի պետական համալսարանի դասախոս,
մանկավարժական գիտությունների թեկնածու
Էլփոստ՝ nalbnelly@mail.ru

Սխալների ուղղումը միանշանակ կարևորագույն գործոն է գրավոր խոսքի բարելավման գործում, ուստի անգլերենի ուսուցիչները պետք է տիրապետեն բավարար հմտությունների և կարողությունների՝ պատշաճ և հեղինակական կերպով այն իրագործելու համար, այնուհետև ձեռք բերած ներուժը լիարժեք ներդնելու ավագ դպրոցականների գրավոր խոսքի ճշգրտության զարգացմանը: Սրանով է պայմանավորված սույն հոդվածի արդիականությունը:

Հոդվածի նպատակն է կարևորել սովորողների գրավոր խոսքի սխալների ուղղումը, որը կնպաստի լեզվական փոփոխությունների զարգացմանը:

Աշխատանքում վեր են հանվել հետևյալ խնդիրները.

- ✓ Վերլուծել փոփոխությունների փոփոխություններ՝ ուղղված սխալների ուղղման արդյունավետությանը:
- ✓ Բացահայտել ավագ դպրոցականների գրավոր խոսքի հմտությունների զարգացման նախապայմանները, կարծիքները՝ կապված սխալների ուղղման փոփոխությունների հետ (ուղիղ, անուղղակի):
- ✓ Ներկայացնել կողային մեթոդը՝ որպես սխալների ուղղման արդյունավետ միջոց ավագ դպրոցում:

Հոդվածում մասնավորապես կիրառվել է վերլուծության մեթոդը, որը թույլ է տալիս կարգավորել ուսումնասիրություններ մի շարք հետազոտողների կարծիքների հաշվառմամբ: Հանգել ենք այն վերջնական եզրահանգման, որ թեև ուսուցիչներն ու ուսանողները սխալի ուղղումն ավանդաբար համարում են գրավոր խոսքի ճշգրտության զարգացման անբաժանելի բաղադրարար, այնուամենայնիվ վերջին փաստամյակում դրա արդյունավետության վերաբերյալ բանավեճեր են ծագել:

Բանալի բառեր՝ սխալների ուղղում, գրավոր խոսքի հմտությունների զարգացում, լրկալ սխալներ, գլոբալ սխալներ, ուղիղ արձագանքման մեթոդ, անուղղակի արձագանքման մեթոդ, կողային մեթոդ:

Գրավոր խոսքը մի գործընթաց է, որը խրախուսում է սովորողներին խորհել, համակարգել իրենց մտքերը և շարադրել դրանք՝ հաղորդակցություն ապահովելով գրողի և կարդացողի միջև: Ուստի այն անձը, որ գրում է, պետք է ճիշտ արտահայտի և շարադրի իր մտքերը, նվազագույնին հասցնելով սխալները՝ իր ընթերցողի թերըմբռնումներից խուսափելու նպատակով (Bitchener & Ferris, 2012):

Հետևաբար օտար լեզվի ուսուցիչները պատասխանատվություն են կրում աջակցելու սովորողներին՝ հասնելու գրավոր խոսքի իմացության լավագույն մակարդակի՝ դասընթացի պահանջներին և նպատակներին համապատասխան:

Մխալների ուղղումը գրավոր խոսքի զարգացման կարևորագույն գործոն է: Այն հավանաբար ամենակիրառելի մեթոդն է՝ արձագանքելու աշակերտի գրավոր խոսքին: Այն արժեքավոր գործիք է՝ ամրագրելու, թե արդյոք սովորողն աշխատանքի կատարման ճիշտ ուղու վրա է, թե ոչ: Այլ կերպ ասած՝ այն ձևավորում է սովորողի ընկալումները և շտկում նրան տարբեր մեթոդների կիրառմամբ:

Մխալների ուղղումը անհրաժեշտ է հատկապես գրավոր առաջադրանքի վերանայման գործընթացում՝ նպաստելով սովորողի գրավոր խոսքի հմտությունների զարգացմանը:

Կրթության ոլորտում և մասնավորապես օտար լեզվի դասերին գրավոր խոսքի մխալների ուղղումը ուսուցիչների կողմից համընդհանուր և հաճախակի կիրառվող գործառույթ է (Ferris, 2007):

Չնայած մխալների ուղղումը գրավոր խոսքի ճշգրտության զարգացման գործում էական նշանակություն ունի, այնուամենայնիվ վերջինիս արդյունավետության հետ կապված՝ կան մի շարք տարածայնություններ:

Թրուսկոտը այն համոզման է, որ գրավոր խոսքի մխալներին արձագանքելն ակնհայտ ծախսողում է, քանի որ քերականությունը և մխալների ուղղումը որևէ նշանակալի դերակատարում չունեն գրավոր աշխատանքում, և այն պետք է անտեսվի: Նա պնդում է, որ սովորողներն ուսուցիչների՝ մխալների ուղղումը դժկամությամբ են ընկալում և հետևաբար շարունակում են գրել այնպես, ինչպես գրում էին նախկինում կամ ընդհանրապես խուսափում են այդ խնդրահարույց մխալներից (Truscott, 2007:271):

Ֆերրիսը, որը համակարծիք է Թրուսկոտի հետ, արտահայտում է այն տեսակետը, որ մխալների ուղղումն անհրաժեշտ է կիրառել միայն գործնական առաջադրանքներ իրականացնելիս՝ կիրառելով համապատասխան արդյունավետ մեթոդներ և մոտեցումներ օտար լեզվի ուսուցման կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասապրոցեսում (Ferris, 1999):

Էլլիսը ևս մխալների ուղղումն անմիջականորեն կապում է խոսակցական հմտությունների բարելավման հետ: Նա նույնիսկ առանձնացնում է մխալների ուղղման անփոխարինելի դերը աշակերտների փոխադարձ հաղորդակցման գործում (Ellis, 2008):

Այնուամենայնիվ, Լայթբրաունը և Սպադան ընդգծում են սովորողի մխալների ուղղման կարևորությունը և այն տեսակետն են արտահայտում, որ այն լեզվի ուսուցման կարևորագույն բաղադրատարր է: Մխալների ուղղմամբ բացահայտվում են մի շարք օրինաչափություններ, որոնց շնորհիվ սովորողները զարգացնում են միջլեզվական մի շարք առանձնահատկություններ: Սա ենթադրում է մի գործընթաց, որի ընթացքում սովորողները կամ նույնացնում են երկրորդ օտար լեզվի կանոնը սեփական լեզվի հետ, կամ սեփական լեզվի կանոնով առաջնորդվում են օտար լեզվում (Lightbrown and Spada, 1999):

Միանշանակ կարելի է համաձայնել, որ սովորողների գրավոր խոսքը կբարելավվի մխալների ուղղմամբ:

Այնուամենայնիվ, վերը նշված փաստարկների հիման վրա էլլիսը կատարել է եզրահանգումներ, թե ինչ սկզբունքով են ուղղվելու մխալները և ինչ ռազմավարություն է կիրառվելու: Մխալների ուղղման հետ կապված՝ հետազոտողը առաջարկում է ուսուցչի ուշադրությունը հրավիրել միայն գլոբալ մխալների (global errors), այլ ոչ թե լոկալ մխալների (local errors) վրա: Գլոբալ մխալները ազդում են գրված նյութի իմաստի ճիշտ ըմբռնման վրա, մինչդեռ լոկալ մխալները ազդում են նախադասության առանձին բաղադրիչների վրա: Ասվածից հետևում է այն հարցը, թե արդյոք կա՞ անհրաժեշտություն բոլոր մխալներն ուղղելու, թե առանձնացնել միայն որոշները (Ellis, 2009a):

Նախկինում ընդունելի էր ուղիղ արձագանքման մեթոդը, որը ենթադրում էր աշակերտների սխալների փաստացի ուղղում, այսինքն՝ ավելորդ նախադասությունները, բառերը կամ արտահայտությունները ընդգծվում էին, իսկ դրանց բացակայության պարագայում տեղադրվում: Առավել արդիական մոտեցում է անուղղակի արձագանքման մեթոդը, ըստ որի ուսուցիչը նշում է սխալի տեսակը՝ երբեմն կիրառելով հատուկ ծածկագրեր, որի արդյունքում աշակերտը ինքնուրույն խորհում, որոնում և գտնում է սխալը (Ferris & Roberts, 2001):

Ուղիղ կամ անուղղակի արձագանքման ընտրությունը կատարվում է ըստ աշակերտների տարիքի և գիտելիքների մակարդակի: Տարրական դպրոցում, երբ ձևավորվում են աշակերտների նախնական գիտելիքները, առավել նպատակահարմար է սխալների անմիջական ուղղումը, քանի որ աշակերտները ինքնուրույն սխալներն ուղղելու համապատասխան լեզվական կարողություններ չունեն: Ավագ դպրոցում անհրաժեշտ է պարզապես մատնանշել սխալը, դրանց շտկման ուղիներ առաջարկել և սովորողին ուղղորդել գրավոր խոսքի հետագա բարելավման գործում:

Ավագ դպրոցականների գրավոր խոսքի հմտությունների զարգացման նպատակով առավել նպատակահարմար է կիրառել սխալների ուղղման կոդային մեթոդը: Այն դիտվում է որպես արդյունավետ մեթոդ, որի միջոցով սովորողները ուղղում են սեփական սխալները, քանի որ այս կերպ նրանց ուղղորդվում է բացահայտել սխալների բնույթը:

Կոդային մեթոդի միջոցով ուսուցիչները սովորողների սխալները կիրառում են որպես ուսուցման գործիք՝ գրավոր խոսքի հմտությունները զարգացնելու նպատակով:

Հեղջը առաջարկում է ուսուցիչներին մատնանշել սխալը և առանձնացնել սխալի տեսակը նշանի միջոցով, օրինակ՝ wo=wrong word order (Hedge, 1988, p. 151).

Ըստ Ռիդելի՝ այս մեթոդը խրախուսում է սովորողներին, նրանց դարձնում առավել պատասխանատու ուսման հանդեպ: Ավելին, ինքնուրույն ուղղելով սխալները, նրանք ավելի շատ են սովորում (Riddell, 2001, p. 152) :

Ստորև ներկայացնում ենք նշանների համակարգը, նշանակությունը և օրինակները:

| Code | Meaning | Example |
|--------|--------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------|
| Sv | Subject-verb agreement | The child <u>like</u> to play with the cat. There <u>are</u> a park near our house. |
| S | No subject | ^Find it easier to study Arabic. |
| Pl | Singular/plural | He got a lot of informations <u>s</u> about his illness. He always makes friend <u>s</u> easily. |
| Sp | Spelling | The boss was a women <u>s</u> . |
| A | Article | I was so thirsty that drank big <u>g</u> lass of water. |
| P | Punctuation | If I get the job in Milan <u>,</u> I'll be pretty happy. |
| Delete | Unnecessary word | The dog <u>it is</u> barking. |
| ^ | Odd word/s | Camels are <u>animals</u> live in the dessert. |
| Cap | Capitalization | He studied in <u>l</u> ondon. |
| Vf | Verb form | I <u>am</u> drive a car. |
| T | Verb tense | They <u>visit</u> Paris last year. |
| Wf | Word form | The film was interest <u>ed</u> . |
| Ww | Wrong word | My teacher <u>learn</u> t me new grammar material. |
| Wo | Wrong word order | I never <u>shopping go</u> on Mondays. |
| Pron | Pronoun reference | Bob loves chess. <u>She</u> plays chess every day. |
| Sf | Fragment (incomplete sentence) | She is exhausted. <u>Because</u> she has been working overtime. |

| | | |
|------|------------------------------------------|------------------------------------------------------------------|
| ns/ | Start a new sentence here | Sleep is important, <u>in</u> addition doing sport is necessary. |
| Prep | Preposition | My university classes start <u>in</u> 9:00 a.m. |
| Conj | Conjunction missing or incorrect | I drink juice <u>and</u> I don't drink milk. |
| ? | I don't understand what you want to say. | |

Կողային մեթոդից բացի՝ առանձնացվում է նաև մեկ այլ անուղղակի սխալների ուղղման տեսակ՝ չկողավորված հետադարձ կապը, որը թույլ է տալիս ուսուցիչներին շրջանակների մեջ առնել սխալները կամ լուսանցքում կատարել նշումներ, որը հնարավորություն կտա աշակերտներին բացահայտելու սխալը և ուղղել այն:

Այսպիսով, սխալների ընդգծումը և առանձնացումը խրախուսում է սովորողներին քննադատաբար մոտենալ իրենց սեփական աշխատանքներին և նկատել լեզվական խնդիրները: Ավելին, սխալների հայտնաբերումը լեզվական ձևի նկատմամբ ուշադրության գիտակցված քայլ է, որը հանգեցնում է սեփական լեզվական խնդիրների իրազեկվածության բարձրացմանը:

Հետևաբար ճանաչողական մոտեցման տեսանկյունից անուղղակի սխալների ուղղումը ապահովում է ավագ դպրոցականների լեզվական ձևերի յուրացմանը:

Ամփոփելով՝ կարելի է փաստել, որ օտար լեզվի յուրացման գործընթացում գրավոր խոսքում սխալներն անխուսափելի են: Հետևաբար ուսուցիչները պետք է գիտակցեն, որ սխալները չափազանց զգուշությամբ պետք է ուղղել՝ հաշվի առնելով այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են օտար լեզվի ուսուցման նպատակը, ուսանողի լեզվական իմացության մակարդակը, սխալների ուղղման միջոցները և արդյունավետությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Bitchener, J. and Knoch, U., ‘The value of written corrective feedback for migrant and international students Language Teaching Research Journal 12, 2008, 409–31
2. Ferris, D., The “Grammar Correction” Debate in L2 Writing: Where Are We, and Where Do We Go From Here? (And What Do We Do in the Meantime...?) Journal of Second Language Writing. 13, 2004, 49-62.
3. Ellis, R., The study of second language acquisition. New York: Oxford University Press, 2008.
4. Ellis, R., A Typology of Written Corrective Feedback Types. ELT Journal, 63(2), 2009a, 97-107.
5. Ferris, D.R., Teaching ESL composition students to become independent self- editors. TESOL Journal, 1995.
6. Ferris, D. R., Preparing teachers to respond to student writing. Journal of Second Language Writing, 16(3), 2007, 165–193.
7. Ferris, D., & Roberts, B. Error feedback in L2 writing classes, how explicit does it need to be? Journal of Second Language Writing, 10, 2001, 161-184. [https://doi.org/10.1016/S1060-3743\(01\)00039-X](https://doi.org/10.1016/S1060-3743(01)00039-X)
8. Hedge, T. Writing. Oxford: Oxford University Press, 1988.
9. Lightbrown, P. M. and Spada, N., How Languages are Learned. Oxford University Press, Oxford, 1999.
10. Riddell, D. Teach yourself. Teaching English as a foreign language. London: Hodder Headline Ltd., 2001.

11. Truscott, J., The effect of error correction on learners' ability to write accurately. *Journal of Second Language Writing*, 16(4) 2007, 255-272.

THE EFFECTIVENESS OF ERROR CORRECTION IN THE PROCESS OF DEVELOPING HIGH SCHOOL STUDENTS' WRITING SKILLS

NALBANDYAN NELLI

PhD in Pedagogical Sciences
Lecturer of Shirak State University
email: nalbnelly@mail.ru

Error correction is undoubtedly a crucial factor in improving writing skills, so English language teachers must possess sufficient skills and abilities to implement it appropriately and consistently, and then fully invest the acquired potential in the development of high school students' writing accuracy. This determines the relevance of this article.

The aim of the article is to draw attention to the correction of students' writing errors, which will contribute to the development of various language abilities.

The following objectives were raised in the work:

- To analyze the viewpoints of different researchers on the effectiveness of error correction.
- To identify high school students' writing skills development preferences and opinions related to different types of error correction (direct, indirect).
- To imply the code method as an effective way of correcting errors in high school.

The method of analysis, in particular, was applied in the article, that allowed to conduct studies based on the opinions of a number of researchers. It should be noted that teachers and students traditionally consider error correction an integral part of developing the accuracy of written speech. However, in the last decade, debates have arisen regarding its effectiveness.

Keywords: *correction of errors, development of writing skills, local errors, global errors, direct response method, indirect feedback method, code method.*

ЭФФЕКТИВНОСТЬ ИСПРАВЛЕНИЯ ОШИБОК В ПРОЦЕССЕ РАЗВИТИЯ ПИСЬМЕННОЙ РЕЧИ СТАРШЕКЛАСНИКОВ

НАЛБАНДЯН НЕЛЛИ

Кандидат педагогических наук
Преподаватель Ширакского государственного университета
электронная почта: nalbnelly@mail.ru

Исправление ошибок, несомненно, является важным фактором улучшения письма, поэтому преподаватели английского языка должны обладать достаточными навыками и умениями, чтобы осуществлять его надлежащим образом и последовательно, а затем полностью вкладывать приобретенный потенциал в развитие точности письма старшеклассников. Вот почему эта статья актуальна.

Цель статьи акцентировать внимание на исправлении письменных речевых ошибок учащихся, что будет способствовать развитию различных языковых способностей.

В работе были затронуты следующие вопросы:

- Проанализировать точки зрения разных исследователей на эффективность исправления ошибок.
- Выявить предпочтения старшеклассников по развитию навыков письменной речи, мнения, связанные с разными видами исправления ошибок (прямыми, косвенными).
- Представить кодовый метод как эффективный способ исправления ошибок в старшей школе.

В статье специально использован метод анализа, который позволил использовать мнение ряда исследователей. Надо отметить, что преподаватели и студенты традиционно считают исправление ошибок неотъемлемой составляющей развития точности письменной речи. Но в последнее десятилетие возникли споры относительно его эффективности.

Ключевые слова: *исправление ошибок, развитие навыков письма, локальные ошибки, глобальные ошибки, метод прямого ответа, метод косвенного ответа, кодовый метод.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 27.05.2023թ.:

Հոդվածը գրախոսվել է 07.06.2023թ.:

Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: